



Doi: 10.56737/2953-7843-2023.06-44

ՇՈՂԻԿ ԴՈՒԿԱՍԵԱՆ

**ՄԵՍՐՈՊ ԵՐԷՅ ՎԱՅՈՑՁՈՐՑՈՒ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ  
ՆԵՐԱԵՍԻ ՊԱՐԹԵՒԻ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ» ԵՐԿԻ ԼԵԶՈՒԿԱՆ  
ԱՌԱՆՁՆԱՅԱՏԱՏՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ<sup>1</sup>**

Ժ. դ. լեզու, ըստ հայոց լեզուի զարգացման պատմության՝ Գ. Զա-հուկեանի կատարած շրջանաբաժանման, համարում է հին հայերենի նախամիջին ենթաշրջանի լեզուական վիճակ<sup>2</sup>։ Հայոց գրական լեզուի պատմությունն սկսում է Ե. դարից եւ անցնում զարգացման երեք հիմ-նական շրջան՝ հին հայերեն (գրաբար), միջին հայերեն եւ նոր հայերեն։ Շուրջ եօթ դար (Ե.-ԺԱ. դդ.) տեւած այդ ժամանակահատուածում գրա-բարը չի մնացել իբրեւ մէկընդմիշտ ձեւաւորուած լեզուական վիճակ։ Լեզուի մէջ կատարուել են զանազան տեղաշարժեր, որոնք արդիւնք են ինչպէս լեզուի զարգացման ներքին օրէնքների, այնպէս էլ ժողովրդի պատմական կեանքում տեղի ունեցած փոփոխութիւնների։ Գրական հա-մընդհանուր լեզուի զարգացման վրայ մեծապէս ազդել են բարբառները՝ հարստացնելով բառապաշարը նոր բառերով, քերականական ու հնչիւ-նական համակարգերը՝ նոր ձեւերով։ «Գրաբարի մէջ խօսակցական-բար-բառային լեզուի օգտին կատարուող նախկին շեղումներն այս ենթաշր-ջանում բազմաճանաչ են, առաջանում են նոր շեղումներ, յաճախանում են հնչիւնափոխական, քերականական, բառապաշարային-իմաստաբանա-կան տարբերութիւնները»<sup>3</sup>։ Գրական լեզուն հարստացել է նաեւ տարբեր լեզուներից փոխառուած օտար բառերով։ Լեզուի զարգացման գործին մեծապէս նպաստել է յունաբան դպրոցը, որն ընդարձակեց հայերենի

<sup>1</sup>\* Ստացուել է 15.05.2023, գրախօսուել է՝ 10.06.2023: էլ. հասցէ՝ shoxerik@mail.ru:

<sup>2</sup> Տէն Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, Հայոց լեզուի զարգացումը եւ կառուցուածքը, Երեւան, 1969, էջ 43:

<sup>3</sup> Անդ, էջ 43:

բառակազմական հնարաւորութիւնները, լեզուն հարստացրեց նոր բառերով, քերականական ու փոխոստակական բազմաթիւ եզրոյթներով<sup>4</sup>: Հայագիտութեան մէջ զգալի ուսումնասիրութիւններ են կատարուել տեղի ունեցած այս փոփոխութիւնների բացայայտման եւ քննութեան ուղղութեամբ: Հայերէնի զարգացման տարբեր փուլերի լեզուական առանձնայատկութիւնների (հնչիւնական համակարգ, քերականական կառուցուածք եւ բառապաշար) ուսումնասիրութեանը նուիրուել են բազմաթիւ արժէքաւոր աշխատութիւններ<sup>5</sup>, ուսումնասիրուել են հին հայերէնի դասական եւ յետդասական ժամանակաշրջանների լեզուամիճակները: Նախամիջին շրջանի (Ը.–ԺԱ. դարեր) ուսումնասիրութեանը եւս նուիրուած են առանձին աշխատութիւններ, սակայն այդ շրջանի լեզուական առանձնայատկութիւնները դեռեւս կարիք ունեն ամբողջական ուսումնասիրութեան: Պատմական զարգացման ընթացքում լեզուի մէջ կատարուել են լեզուական բոլոր իրողութիւններն ընդգրկող զանազան տեղաշարժեր, որոնց արդիւնքում Ժ. դ. լեզուն զգալիօրէն տարբերում է նախորդ դարերի լեզուից: Այս դարի հեղինակներից հանգամանալից հետազօտուած են Գրիգոր Նարեկացու լեզուն եւ ոճը<sup>6</sup>, մինչդեռ պատմագրութեան լեզուն դեռեւս ամբողջութեամբ ուսումնասիրուած չէ: Առանձին յօդուածներով անդրադարձել ենք Ժ. դ. պատմագրութեան<sup>7</sup> լեզուական առանձնայատկութիւններին, ներկայացրել հնչիւնական տարաբնոյթ փոփոխութիւնները, բառապաշարի կրած զարգացումները, այդ թւում՝ ա) նորայայտ բառերը (ի դէպ, երբեմն դժուար է լինում որոշել դրանց նորայայտ թէ նորակազմ լինելը), բ) բառերի իմաստային նոր կիրառութիւնները, գ) փոխառեալ բառերն ու դրանց գործածութիւնները: Ուսումնասիրել ենք նաեւ հոլովման եւ խոնարհման համակարգերում

<sup>4</sup> Տէն Ա. ՄՈՒՐԱԿԵԱՆ, Յունաբան դպրոցը եւ նրա դերը հայերէնի քերականական տերմինաբանութեան ստեղծման գործում, Երեւան, 1971:

<sup>5</sup> Մ. ԱՔԵԼԵԱՆ, Հայոց լեզուի տեսութիւն, Երկեր, հտ. Զ., Երեւան, 1974: Գ. ԶԱՀՈՒԿԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն (Նախագրային ժամանակաշրջան), Երեւան, 1987: Ակնարկներ միջին գրական հայերէնի պատմութեան, հտ. Ա., Բ., Երեւան, 1972, 1975: Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Գրաբարի հոլովումը եւ խոնարհումը, Երեւան, 1945: Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառութիւնը, Լեզուի եւ ոճի հարցեր, Երեւան, 1975: Գ. ԽԱՉԱՏՐԵԱՆ, Գրաբարի վերլուծական բայերի արժոյթը, Երեւան, 2000:

<sup>6</sup> Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, Գրիգոր Նարեկացու լեզուն եւ ոճը, Երեւան, 1975:

<sup>7</sup> ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՅ, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1996: ՈՒԽՏԱՆԷՍ, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871: ԹՈՎՄԱ ԱՐԾՐՈՒՆԻ, Պատմութիւն Տանն Արծրունեաց, Երեւան, 1985: ԱՆԱՆՈՒՆ, Պատմութիւն Անանուան, Երեւան, 1985:

առկայ բոլոր փոփոխությունները: Կատարուել է նաեւ վիճակագրական աշխատանք<sup>8</sup>:

\* \* \*

Հին հայերէնի մէջ կատարուած փոփոխություններն ընդգրկում են լեզուական բոլոր իրողությունները՝ բառապաշարը, հնչիւնական համակարգը, քերականությունը: Նախկին երկբարբառներն ու եռբարբառներն աստիճանաբար պարզուում են, սկսում են հնչիւնափոխուել նախկինում հնչիւնափոխուող ա եւ ո հնչիւնները, բազմաթիւ փոփոխություններ են կրում հոլովման եւ խոնարհման համակարգերը, կազմուում են բազմաթիւ նոր բառեր, որոշ բառեր, կորցնելով նախկին իմաստները, վերաիմաստաւորում են:

Դասական շրջանի լեզուական օրինաչափությունները գրի առնելով պահպանուում են անփոփոխ, մինչդեռ ժողովրդական լեզուն արագ զարգանում է՝ ենթարկուելով արմատական փոփոխությունների: Ժ. դ. այդ փոփոխություններն այնքան են շատանում, որ ակնյայտ է դառնում գրական եւ խօսակցական լեզուների տարբերությունը: Եւ այս շրջանում արդեն Ե. դարի լեզուն՝ իբրեւ հայ հին մատենագիրների լեզու, ուսուցանուում է դպրոցներում: Ինչպէս նշում է Ա. Այտընեանը, «անմոռանալի է դարձեալ այս Լ., Թ., Է. դարերուն միջոցը՝ զրաբար հայերէնի պատմութեանը մէջ. տխուր են անոր կենսագրութեան այս էջերը՝ որ հոգեվարքին նկարագրութեամբը կը բացուին, եւ կը փակուին մահուանը տեսարանով: Այսպէս մեռեալ լեզուաց կարգը կմտներ անկէ ետեւ մեր զրաբարն ալ.... Լեզուին հոգին, ոյժն ու գեղեցկութիւնը՝ անաչառ խօսելով՝ կորուսուած արուեստներուն կարգը մտաւ, եւ սկսաւ հզօր զրաբարն անզօր գրիչներուն վրայ ծանրանալ»<sup>9</sup>: Այդուհանդերձ՝ զրաբարը մնում էր իբրեւ գրականութեան որոշ ժանրերի, մանաւանդ պատմագրութեան լեզու: «Հին մատենագրական յուշարձանների լեզուն իր հեղինակութեամբ, հնութեամբ ու մշակուածութեամբ հանդէս է գալիս իբրեւ ընդօ-

<sup>8</sup> Տէն «10-րդ դարի պատմագրութեան հոլովական համակարգի առանձնայատկությունները», «Գիտական նիւթերի ժողովածու՝ նուիրուած Տ. Մ. Աւետիսեանի 60-ամեակին», Վանաձոր–Երեւան, 2001: «10-րդ դարի պատմագրութեան հնչիւնական համակարգի առանձնայատկությունները, «Բանբեր Երեւանի», Երեւան, 2002, թիւ 2/107/: «Ենթակալի եւ ստորոգեալի արտայայտությունն ու կապակցելիությունը 10-րդ դարի պատմագրութեան մէջ», «Կանթեղ», Երեւան, 2004, թիւ 2 եւ այլն:

<sup>9</sup> Ա. ԱՅՏՐՆԵԱՆ, Քննական քերականություն արդի հայերէն լեզուի, Երեւան, 1987, էջ 133:

րինակութիւնների աղբիւր. աւանդութեան ուժը արգելք է հանդիսանում խօսակցական լեզուի մէջ կատարուած տեղաշարժները գրական լեզուում արտացոլելուն: Հնի ընդօրինակութիւնը դառնում է ժամանակի գրական լեզուի ամենաբնորոշ կողմերից մէկը»<sup>10</sup>: Ե. դարի լեզուով ստեղծագործելը համարւում էր «քերթողական արուեստ», իսկ խօսակցական լեզուն ժամանակակիցներն անուանում էին «գեղջուկ բան», «ռամիկ լեզու», նոյնիսկ՝ «գռեհիկ բան»:

Անուանումները ցոյց են տալիս, որ խօսակցական լեզուն այնքան էլ չի յարգուել ժամանակակիցների կողմից, եւ, ինչպէս Ժ. դարի պատմիչ Յովհաննէս Դրասխանակերտցին է գրում, ուրիշներին պարզ եւ ծիծաղելի չթուալու համար ձգտել են «ոչ ըստ գեղջկաց անարուեստից երկրորդեալ զայն ինչ, զոր նախ քան զմեզ քաջք եւ բանաստեղծք արգոյակապք եւ զարմանալիք զարժանի բան պատմութեան անտուստ ի վերուստ արձանագրեցին զյայտապատում իրս թագաւորաց... զի մի՛ տղայաբար ինչ յանդգնեալ զմիանգամ գրեալսն երկրորդեցից եւ զքերթողական արուեստ տապալեցից, եւ զայն վերձանողացն ծիծաղելիս յարկացուցից»<sup>11</sup>:

Բնականաբար այս ժամանակի պատմագրութիւնը կրում է կենդանի խօսակցական եւ գրական (որն արդեն սովորովի լեզու էր) լեզունների միջեւ եղած տարբերութեան կնիքը: Այդ տարբերութիւնը, ինչպէս նշում է Էդ. Աղայեանը, պատճառ է հանդիսանում «ոչ ճիշտ, կեղծ «գրական» ու ճոռոմաբան ոճի զարգացման, փքուռոյց ու խրթին, մանուածապատ ոճի պահպանմանը նպաստում է նաեւ արաբերէնը, որ միջին դարերում գրական լեզուի վրայ որոշակի ազդեցութիւն է գործել»<sup>12</sup>: Վ. Առաքելեանը «Գրիգոր Նարեկացու լեզուն եւ ոճը» ուսումնասիրութեան մէջ անդրադառնում է Ժ. դ. պատմագրութեան լեզուին եւ նշում, որ «10-րդ դ. զուգընթաց գործում էին լեզուական երկու ուղղութիւն. մէկը ժողովրդական, պարզ ու հասկանալի, թերեւս առանց տեսական հիմնաւորման, բայց որոշ նպատակով: Այս ուղղութեամբ գրողները գրա-

<sup>10</sup> Է. Դ. ԱՂԱԵԱՆ, Գրաբարի պատմութեան շրջաբաժանումը, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1974, թիւ 2, էջ 76:

<sup>11</sup> ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՑՈՒՅ, Պատմութիւն Հայոց, էջ 8:

<sup>12</sup> Անդ, էջ 77: Բանասէրներն արաբական ազդեցութեանն են վերագրում այդ շրջանի հայ հեղինակների ուղուցիկ ոճը: Աճառեանը ժխտում է այդ կարծիքը՝ յիշատակելով այդ ոճի ամենամեծ ներկայացուցիչ Թէոփորոս Քոթենաւորին, որն ապրել է արաբական տիրապետութիւնից առաջ (տե՛ս Հ. ԲԱՃԱՌԵԱՆ, Հայոց լեզուի պատմութիւն, հտ. 2, Երեւան., 1951):

կան լեզուն հեռու էին պահում օտարաբանություններից, կեղծ յունական քերականական կանոնների վրայ կաղապարուող անհիւթ, անկենդան լեզուից, իսկ միւսը նոյնպէս նպատակով, նոյնիսկ յատուկ մոլեռանդութեամբ, գրաբար լեզուն տանում էր այդ վնասակար, մահուան դատապարտուած ուղիով՝ արհամարհելով «գեղջուկ բանիւ» գրողներին. իսկ «գեղջուկ բանը» ժամանակի սովորական գրաբարն էր, առանց խճողման, առանց հռետորական ձեւերի: Ուրեմն խրթնաբանութիւնը, լեզուի արհեստական բարդացումն ու խճողումը համատարած մի երեւոյթ էր, հայերէնի պատմութեան մէջ սա մի հոսանք է եղել բոլոր դարերում: Լեզուի զարգացման մայր երակը ընթացել է իր բնականոն հունով»<sup>13</sup>: Նա ժ. դարի պատմիչներ Ուխտանէսին, Ասողիկին եւ Շապուհ Բագրատունուն համարում է ժողովրդական ուղղութեան ներկայացուցիչներ, իսկ Յովհաննէս Դրասխանակերտցուն եւ Թովմա Արծրունուն՝ կեղծ, արհեստական լեզուով ստեղծագործողներ:

Սակայն պատմագրութեան մէջ առկայ բազմաթիւ քերականական շեղումները վկայում են այն մասին, որ որքան էլ պատմիչները ձգտել են պահպանել դասական շրջանի օրինաչափութիւնները, այնուամենայնիւ նրանց գիրը զերծ չի մնացել խօսակցական լեզուի ազդեցութիւնից: Որքան էլ նրանք խուսափել են «գեղջուկ բանից», այնուամենայնիւ խօսակցական լեզուի տարրերը ներթափանցել են նրանց լեզուի մէջ: Նրանց երկերում հանդիպում են նաեւ բազմաթիւ բառեր եւ բառաձեւեր, որոնք գրական հայերէնում գործածական չէին, այլ խօսակցական լեզուի ազդեցութեան արդիւնք էին:

Ժ. դ. մատենագրութեան մէջ առանձնապատուկ տեղ են գրաւում Յովհաննէս Դրասխանակերտցու «Պատմութիւն Հայոց»-ը, Թովմա Արծրունու «Պատմութիւն Տանն Արծրունեաց» եւ սրան կցուած Անանուն մատենագրի երկերը, Ուխտանէսի «Պատմութիւն Հայոց»<sup>14</sup> եւ Մեսրոպ Վայոցձորցու «Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթեւի Հայոց հայրապետի» երկերը: Մեսրոպ Վայոցձորցու մասին կենսագրական տեղեկութիւնները սակաւ են, նա իր մասին միայն յայտնում է. «Ես Մեսրոպ նուաստ քահանայ ի Վայոց ձորոյ ի Հողոց գեղջէն, ուստի էր եւ երանելի նահա-

<sup>13</sup> Վ. ԱՌԱՔԵԼԵԱՆ, նշ. աշխ., էջ 22:

<sup>14</sup> Երկը բաղկացած է երկու հատուածից: Ա. հատուածը վերնագրուած է «Պատմութիւն հայրապետաց եւ թագաւորաց Հայոց», Բ. հատուածը՝ «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց»:

տակն Քրիստոսի Յովսէփ յաւուրս Սրբոյն Վարդանայ,.... Ես Մեսրոպ մեծաւ ցանկութեամբ ծաղկաքաղ արարի զգիրս զայս ի Հայոց մնացորդաց յաեւելից գրոց զյաղթութիւն եւ զվատթարումն թագաւորացն Հայոց եւ Վրաց»<sup>15</sup>:

Գրել է Ներսէս Ա. Մեծի վարքը եւ Մամիկոնեանների տոհմի պատմութիւնը: Պատմութեան աղբիւրագիտական նշանակութիւնն այնքան էլ մեծ չէ. այդ բոլոր իրադարձութիւններին արդեն անդրադարձել էին նախորդ դարերի պատմիչները: Նա իր պատմած դէպքերի ականատեսը չի եղել, եւ նրա պատմութիւնն աւելի շատ նման է հրաշապատում հեքիաթի: Պատմական բոլոր իրադարձութիւնները գնահատում են Ներսէս Մեծ հայրապետի հետ ունեցած առնչութեան տեսակէտից: Պատմական որոշ դէմքերի եւ դէպքերի նկարագրութեամբ հանդերձ՝ այն գերազանցապէս սրբի վարքագրութիւն է, որի հրաշագործ ուժի մասին պատմում է խոր հաւատով ու երկիւղած հիացմունքով: Հայրապետի աքսորուելն անմարդաբնակ կղզի, որտեղ «ոչ գոյր արմատ դալարուոյ, եւ ոչ ճանապարհ նաւուց. բայց միայն ապառաժ եւ չորանուտ», ու այնտեղ երկու տարի շարունակ աղօթքով ապրելն ու աստծուց կերակրուելը նման է հրաշքի, որի ճշմարտացիութեանը Մեսրոպը չի կասկածում եւ խոր համոզմունքով է պատմում դրանց մասին: Երբեմն Վայոցձորցու տեղեկութիւնները հակասում են միւս պատմիչների հաղորդած փաստերին<sup>16</sup>: Մեսրոպ Վայոցձորցին Ուխտանէսի նման յաճախ է կրկնում ասածը, տարբեր ձեւերով պատմում միեւնոյն դէպքը:

Անկախ այս երկի պատմագիտական արժէքից՝ մեծ է սրա նշանակութիւնը Ժ. դ. լեզուական առանձնայատկութիւնը՝ քերականական ու հնչիւնական համակարգերի, բառապաշարի պատմական զարգացման օրինաչափութիւնները բացայայտելու գործում:

Մեսրոպ Վայոցձորցու պատմութեան լեզուն պարզ է ու զուսպ, չունի զարդարուն ու շքեղ նկարագրութիւններ, եւ ի տարբերութիւն Ժ. դ.

<sup>15</sup> ՄԵՍՐՈՊ ՎԱՅՈՑԱՊԵՏ, Պատմութիւն սրբոյն Ներսէսի Պարթևի Հայոց հայրապետի, Մաղրաս, 1775, էջ 135: Այսուհետեւ Վայոցձորցու պատմութիւնից բերուած օրինակներում էջերը կնշուեն բուն շարադրանքում՝ փակագծերի մէջ:

<sup>16</sup> Վայոցձորցին Ներսէս Մեծի անմարդաբնակ կղզի աքսորուելու պատճառը համարում է յուսաց Վաղէս կայսեր կամքը չկատարելը. նա մերժում է աղօթել կայսեր հիւանդ որդու առողջութեան համար, երբիսան մահանում է, որի պատճառով էլ Վաղէսը նրան աքսորում է: Յովհ. Դրասխանակերտցին ոչինչ չի պատմում այս մասին. ըստ նրա՝ Վաղէսը նոյնիսկ չի ընդունել քահանայապետին:

միւս պատմիչների երկերի բառապաշարի՝ նրա պատմութեան բառապաշարում արձանագրուած նոր բառերն ու բառաձեւերը թուով ամենաքիչն են<sup>17</sup>։ Այնուամենայնիւ երկում գտնում ենք ՅՅ բառ, որոնք կա՛մ չկան բառարաններում, կա՛մ վկայուած են միայն Մեսրոպի հեղինակութեամբ։ Դրանք կարող են լինել ինչպէս հեղինակային նորակազմութիւններ, այնպէս էլ ժողովրդախօսակցական լեզուին յատուկ բառեր, բարբառային ձեւեր, որոնք գրականութիւն են մուտք գործել Վայոցձորցու շնորհիւ։ Այդ բառերն են՝

Անեղատես՝ «տեսքով ահեղ»<sup>18</sup> – «Յարուսցէ յարեւելից կողմանէ թագաւոր այլադէմ, եւ այլալեզու.... ահեղատես, եւ զարմանալի, ժպիրհ, եւ սէգ» (105)։

Աղեղնադօշ՝ «աղեղնաւորի դրօշ կրող զօրք, նետաձիգ» – «Եւ աղեղնադրօշք՝ ի մէջ պատերազմաց՝ իբրեւ հուր ընդ եղէգն ընթանային» (58)։

Անասնադէմ՝ «անասունի դէմք ունեցող» – «Ծնանիցեն կանայք անասնադէմս եւ այլակերպս» (105)։

\*Անհեշտակամ<sup>19</sup>՝ «ոչ հեշտ, դժուար» – «Ստացեալ զանձինս իւրեանց կրթութեան հոգեւորաց եւ բազում անհեշտական» (99)։

Ասպարահատ՝ «վահանով ճանապարհ բացող»<sup>20</sup> – «Ասպարահատք վահանօք անկեալ՝ զնմանիս իւր կորուսանօղ» (92)։

\*Բիրաշարիւ՝ «շատ չարութիւն» – «Իսկ նա ասէր, զայր մեղապարտ եւ բիրաշարեօք լի միջնորդ կացուցանէք առ Աստուած եւ առ մարդիկ» (59)։

\*Դիրացուցիչ՝ «հեշտացնող» – «Ո՛չ գտցի փրկութիւն, ո՛չ վերակացու, ո՛չ անդորրիչ, ո՛չ դիրացուցիչ» (109)։

Թագանման՝ «պսակաձեւ» – «Զհեր թագագանգուրս թագանման վարսիցն՝ զայն ի բաց խուզեալ՝ ի նմանէ» (60)։

Խանգարեցուցիչ՝ «խանգարող» – «Աշունն խանգարեցուցիչ ո՛չ ժողովելով ի շտեմարանս զիրաքանչիւր սերմանիս» (105)։

Կարմրափայլ՝ «կարմիր փայլ ունեցող» – «Պսակին մարտիրոսքն կարմրափայլ» (124)։

<sup>17</sup> Հմմտ.՝ Յ. Դրասխանակերտցու պատմութեան մէջ վկայուած է 295 նոր բառ, Թ. Արծրունու պատմութեան մէջ՝ 209 նոր բառ։

<sup>18</sup> Բառերի նշանակութիւնները պարզեւիս օգտուել ենք ՆՀԲ-ի, ՀԱԲ-ի, ԱԲ-ի տուեալներից։

<sup>19</sup> Այն բառերը, որոնք բառարաններում չեն արձանագրուել, կնշուեն աստղանիշով։

<sup>20</sup> Ասպար նշանակում է «վահան», ասպարահատ՝ «վահանով ճանապարհ բացող»՝ հատանել բայի «ճեղքել» իմաստից։

Կարողաձիգ՝ «վարժ նետաձիգ» – «Եւ վասն կործանման աշխարհի աղեղունք կարողաձիգ զօրացն» (110):

Կոշկոնիչ՝ «ծեծող» – «Եւ թակ զգլխոյ ձերոյ կոշկոնիչ կապէք զիս» (60):  
 Հեծումն՝ «լաց, հառաչանք» – «Զհեծումն տալ եւ յառնուլ հոգւոց ելանելոց յահագին հարուածոցն» (97):

Ձինախելոյ՝ «ձեան մէջ խեղդուած» – «Եւ զի բազումք գազանակերք լինէին, եւ գետալէժք, ձինախեղդք, եւ յայլ որոգայթս» (65):

Ճարպութիւն՝ «խլղոտութիւն» – «Բարձցի այր հզօր, եւ կին զօրաւոր զպարարտութիւն հացի, եւ զճարպութիւն կերակրոյ բարձցեն մարդիկք» (110):

\*Մայրակոտոր՝ «հատած, կտրած անտառ» – «Դիաթաւալ կացուցանէին յերեսս դաշտացն, որպէս զմայրակոտորս (87):

Մարգարտապատ՝ «մարգարտազարդ» – «Ոմանց յերկրի տացի արքայութիւն.... ի վերին Երուսաղէմ, որ մարգարտապատ է քաղաքն, եւ տուն առանց ձեռագործի» (124):

Նեղամահ՝ «տանջամահ» – «Զայս աւաղ տամ անձին իմոյ, որ... նեղամահ կորեայ» (133):

Նետաձգող՝ «նետաձիգ» – «Ոչ տացին ճապաղիլ նետաձգողաց հզօրաց աղեղնաւորաց» (96):

Նիզակափաղ՝ «նիզակով սպանող» – «Կացին զօրավարք՝ նիզակափաղք, քաջասիրտք» (58):

\*Շուշանակերպագոյն՝ «շուշանի նման» – «Ընդ նոսին փայլին շուշանակերպագոյն եւ կուսանացն պսակք» (124):

Ումարգելոց՝ «քարէ պատնէշ»<sup>21</sup> – «Սպանաք զԳնէլ ի կատար լերինն՝ մօտ Ումարգելոցի էրէրոց որսոյն» (63):

Չորանուտ՝ «չորային, ցամաք» – «Յայնմ կղզւոջ ո՛չ գոյր արմատ դալարոյ եւ ո՛չ ճանապարհ նաւուց, բայց միայն ապառաժ եւ չորանուտ» (76):

Ռազմահատ՝ «մարտը ճեղքող, յարձակուող» – «Կացին զօրավարք Մամիկոնեանք ճակատամարտք, ռազմահատք» (58):

<sup>21</sup> Վալոյցձորցին օգտուել է Փաւստոս Բուզանդից, որի պատմութեան մէջ կարգում ենք. «Գնացին մօտ ի Սիւսն արքունի եւ անդէն կառափէին ի սարակ լերինն.... մօտ յորմածս արգելոցացն որսոյն էրիոց» (Փաւստոս Բուզանդ, Պատմութիւն Հայոց, Երեւան, 1947, դպր. 4, գլուխ ԺԵ.): Բուզանդի գործածած յորմածս արգելոցացն կապակցութիւնը Մեսրոպը բարդել է եւ կազմել նոր բառ՝ ռազմարգելոց: Բուզանդը նոյն իմաստն արտայայտել է նաեւ Սիւս ուրարտական ծագում ունեցող բառով, որ նշանակում է «որմ»:

Ռազմիկ՝ «մարտիկ, պատերազմող» – «Կոչեալ զնախարարս ռազմիկ հեծելոց» (104):

Սակրակապետ<sup>22</sup> – «Կազմեցին պատրաստեցին զօրագլխացն սակրակապետօք զՎարդան Մամիկոնեան» (74):

Սեպհակամագունդ՝ «նախարարական գունդ» – «Եւ մինչ դեռ գտեսիլն պատմէր Սուրբն Ներսէս առաջի ժողովրդեանն, եւ սեպհականագունդ հեծելոցն» (111):

Սպիտակակերպ՝ «սպիտակ» – «Ապա երեւիր Սուրբ քահանայապետն Ներսէս առաջի մեր սպիտակակերպ զգեստութեամբ» (97):

Ստուկ՝ «ստախոս» – «Յանդիմանեաց զիս իբրեւ զստուկ» (77):

\*Սրանարակ՝ «սրին զոհ դարձած»<sup>23</sup> – «Եւ ժողովեալ նախարարացն Հայոց զօրօքն իւրեանց՝ հարեալ զԱրշակաւան սրաճարակ արարին առ հասարակ» (82):

Վահանադօշ՝ «վահանաւոր» – «Իսկ թագաւորն Հայոց Արշակ եւ Վասակ զօրավարն Հայոց եւ Վրաց..... սաստիկ բաշխելով՝ խորտակէին զվահանադօշսն» (73):

Փայլփայլումն՝ «փայլելը, շողալը» – «Անդ էր տեսանել զփայլփայլումն ասպարաց եւ զշողումն պողովատկաց» (96):

\*Քարաղբիւ՝ «քարից պատրաստուած աղբիւր, հնարաւոր է, որ լինի բերդանուն» – «Ի մեծ եւ յանուանի քաղաքն՝ որ ունի զքարաղբիւրն մեծ բերդ աղբիւրս բարեհամա» (82):

Ամհեշտական, բիւրաշարիք, դիւրացուցիչ, մայրակոտոր, շուշանակերպ, սպիտակակերպ, սրանարակ եւ ֆարաղբիւր բառերը տեղ չեն գտել բառարաններից եւ ոչ մէկում, իսկ նետաձգող բառը գտնուում ենք միայն ԱԲ-ում:

Նոր բառերի զգալի մասը վերաբերում է ռազմական կյանքին՝ ռազմիկ, ռազմահատ, նիզակափաղ, սեպհակամագունդ, վահանադօշ, ասպարահատ, կարողաձիգ, աղեղնադօշ, նետաձգող:

Մեսրոպ երէցը մեծ ուշադրութիւն է դարձնում ռազմական գործողութիւնների պատկերմանը, բայց ի տարբերութիւն Յովհաննէս Դրասխանակերտցու եւ Թովմա Արծրունու՝ Ներսէս Վայոցձորցու շարադրանքը չունի գեղարուեստական այն ուժն ու արտայայտչականութիւնը, որ գործողու-

<sup>22</sup> Բառի իմաստը ճշտուած չէ: ՀԱԲ-ն բառը համարում է սխալ գրչութիւն: ՆՃԲ-ն ուղղում է սատրապապետ «նախարարապետ», իսկ ԱԲ-ն դնում է սակրապետ՝ «գլխաւոր իշխան»:

<sup>23</sup> Ճարակ նշանակում է «կեր», ապա նաեւ «տարածուելով ծաւալուել», որից էլ ունենք սրանարակ՝ «սրին համատարած զոհ դարձած»:

Թիւնների նկարագրութեանը գեղարուեստական պատկերի արժէք է տալիս: Այն հիմնականում նուիրուած է Մամիկոնեանների «տիրասէր» տոհմի՝ մասնաւորապէս Մուշեղ Մամիկոնեանի արիութեան, վեհանձնութեան գովաբանմանը եւ ի տարբերութիւն ժ. դարի միւս պատմիչների՝ Մեսրոպի պատմութեան մէջ բացակայում է ժողովուրդը, ռազմական գործողութիւններում հետին դիրք է մղում զօրքը, կարծես մարտական գործողութիւնն ամբողջութեամբ կատարում է միայն զօրավարը, եւ յաղթութեան ամբողջ պատիւը միայն նրանն է: «Անդ էր տեսանել զվայլփայլումն ասպարաց եւ զշողումն պողովատկաց.... Անդ էր տեսանել զբեկմունս աղեղանց, եւ զխորտակմունս նիզակացն. որպէս զարագաթեւ հողմոյ նման խոյանալն քաջին Մուշեղայ ճերմակ երիվարաւն.... Կոչէր առիւծաբար քաջն Մուշեղ, ճեղքէր զռազմ արանց քաջաց՝ պատենազինաց ռամկաց. յարձակէր վարագաբար, եւ բերեալ զաջ թեւն՝ ընդ ձախովն արկանէր» (93, 96): Մուշեղ Մամիկոնեանը եւ ընդհանրապէս Մամիկոնեանները Վայոցձորցու սիրելի պատմական հերոսներն են, որոնց նա անուանում է «ռազմահատք աղեղնաւորք, արծուէնշանք, նիզակաքաղք, քաջասիրտք, աներկիւղք ի պատերազմունս՝ եւ յաջողակ ի մարտս պատերազմաց. բարենշանք, բարեհամբաւք եւ աղեղնադրօշք» (58):

Մեսրոպի նոր բառերի մեծ մասը կազմուած է բառաբարդմամբ: Դրանք՝ բոլորը, յօդակապով իսկական բարդութիւններ են՝ կազմուած հետեւեալ կաղապարներով՝

1. 1. գոյական + յօդակապ + բայ – ասպարահատ, ձիւնախեղդ, մայրակոտոր<sup>24</sup>, մարգարտապատ, նիզակաքաղ, ռազմահատ,

2. գոյական + յօդակապ + գոյական – աղեղնադրօշ, անասնադէմ, շուշանակերպ, սրաճարակ, վահանադրօշ,

3. գոյական + յօդակապ + ածական – թագանման,

4. ածական + յօդակապ + գոյական – ահեղատես, կարմրափայլ, նեղամահ, սեպհականագունդ, սպիտակակերպ,

5. ածական + յօդակապ + բայահիմք – կարողաձիգ,

6. թուական + յօդակապ + գոյական – բիւրաշարիք:

Այս բոլոր բաղադրութիւններում անուանական հիմքը համընկնում է ուղղական հոլովին, հիմքի վերջնավանկի ձայնաւորը երբեմն

<sup>24</sup> Այստեղ հայերէնի հնչիւնական օրէնքներին համապատասխան մայրեկոտոր (մայրի + ա + կոտոր) ձեւի փոխարէն ունենք մայրակոտոր ձեւը: Ի հնչիւնը ա ձայնաւորից առաջ ե հնչիւնափոխուելու փոխարէն սղուել է:

ենթարկուել է հնչիւնափոխութեան, ինչպէս՝ մարգարտապատ (մարգարիտ), մայրակոտոր (մայրի), կարմրափայլ (կարմիր), անասնադէմ (անասուն), սրաճարակ (սուր): Բայական հիմքը բոլոր դէպքերում համընկնում է բայարմատին:

Վայոցձորցին միայն մէկ անյօդակապ իսկական բարդութիւն ունի՝ գոյական + գոյական կաղապարով՝ Բարադրիս:

Ածանցաւոր բառերում գտնում ենք միայն մէկ նախածանցաւոր բառ՝ անհեշտակամ<sup>25</sup>, մնացած բոլոր դէպքերում Վայոցձորցին կիրառել է վերջածանցներ, որոնք գործուն են նաեւ ժամանակակից հայերէնում: Ի տարբերութիւն Յովհաննէս Դրասխանակերտցու եւ Թովմա Արծրունու, որոնց երկերում գործածութեան յաճախականութեամբ աչքի է ընկնում գոյականակերտ -ութիւն վերջածանցը, Վայոցձորցին այս ածանցով միայն մէկ բառ է կազմել՝ ճարպութիւն: Մէկական անգամ են կիրառուել նաեւ -իկ (ռազմիկ), -ոյ (նետաձգող), -ուկ (ստուկ), -ուտ (չորանուտ) ածանցները: Երկու անգամ գործածել է -ումն վերջածանցը՝ փայլփայլումն, հեծումն, իսկ գործածութեան ամենամեծ յաճախականութիւնն ունի -իչ ածանցը, որը, բայահիմքի վրայ դրուելով, կազմել է գոյականներ՝ «գործող, մի բան կատարող» նշանակութեամբ՝ դիւրացուցիչ, խանգարեցուցիչ, կռչկոնիչ: Մեսրոպ Վայոցձորցու է՝ բարդ, է՝ ածանցաւոր բառերը կազմուած են հայերէնի բառակազմական օրինաչափութիւններին համապատասխան:

Արհեստական կազմութիւն ունի նետաձգող բառը: Բառին մի բան կատարողի նշանակութիւն է տալիս -ոյ վերջաւորութիւնը: Տուեալ դէպքում բառն առանց -ոյ վերջաւորութեան էլ ունի «նետ արձակող» իմաստը, ածանցը նրան լրացուցիչ ոչ մի իմաստ չի հաղորդել, եւ դրա գործածութիւնն այստեղ աւելորդ ենք համարում: Արհեստական է նաեւ սպիտակակերպ կազմութիւնը: Մեսրոպը բառը գործածել է «սպիտակ» եւ ոչ թէ «սպիտակի նման» իմաստով:

Վայոցձորցու պատմութեան մէջ նորակազմ ոչ մի բայ չենք գտնում:

Ինչ վերաբերում է ձեւաբանական առանձնայատկութիւններին, ապա Վայոցձորցու պատմութեան լեզուն առաւել հարազատ է մնացել դասական գրաբարի օրինաչափութիւններին: Ե՛ւ հոլովման, է՛ւ խո-

<sup>25</sup> Վայոցձորցին բաղադրութիւնը կազմել է Ե. դարից վկայուած հեշտակամ ածանցաւոր բառին աւելացնելով ան- նախածանցը:

նարհման համակարգերն առաւել միօրինակ են: Եթէ Ժ. դարի միւս պատմիչների երկերում հանդիպող բազմաթիւ փաստեր վկայում են, որ արդեն Ժ. դ. տարածուել եւ ընդհանրութիւն է ձեռք բերել գործիական հոլովի -ով վերջաւորութիւնը անգամ ու հոլովման չպատկանող բառերի գործիականում, միայն Մեսրոպ Վայոցձորցու երկում է, որ -ով վերջաւորութեամբ ձեւերի չենք հանդիպում: Հոլովման համակարգի՝ դասական գրաբարից շեղումները երկում հազուադէպ են. Մեսրոպ Վայոցձորցին առանց -է վերջաւորութեան է կազմել սով եւ ժամ բառերի բացառականները, ինչպէս՝ «Սկսան վտանգիլ ի սովու եւ ի ծարաւոյ» (76): «Եւ ի ժամուն յայնմանէ.... ոչ դադարեաց պատերազմն» (132):

Դասական գրաբարում մարդ բառի յոգնակին կազմւում է երկու ձեւով՝ -ի կամ -իկ յոգնակերտների միջոցով՝ մարդի կամ մարդիկ: Մեսրոպ Վայոցձորցու երկում բառը յաճախ հանդիպում է գործածուած միաժամանակ երկու յոգնակերտներով էլ: Այսպէս, «Եւ ամենայն խառնիճաղանճ մարդիկ ի մի հաւանութիւն միաբանութեամբ եկեալ՝ ասեն ցարքայն Արշակ» (58):

Մեսրոպ Վայոցձորցու պատմութեան մէջ յստակ չեն տարբեր ժամանակաձեւերի կիրառութիւնների սահմանները: Ի տարբերութիւն միւս հեղինակների՝ Վայոցձորցին ընդհանրապէս չի առանձնացնում անցեալ կատարեալը եւ անկատարը: Միեւնոյն նախադասութեան մէջ միաժամանակ նոյն իմաստով գործածում է երկուսն էլ. «Նաեւ զօրքն Հայոց՝ որք էին ընդ Սրբոյն Ներսէսի, զի տեսին ուր պատարագէր նա, եւ լսին զձայն երկնաւոր զօրացն» (62): «Եւ հրամայէր ի զերծ տեղիս.... շինել զպանդոկս.... նաեւ բաշխեաց յեղբայրանոցս զգեօղս եւ դաստակերտս» (65): «Եւ կատարեցաւ բանն առն Աստուծոյ Սրբոյն Ներսէսի եւ ամենեքեան զարմամային ընդ արագահաս կործանումն նորա» (66) եւ այլն: Ժ. դարի միւս հեղինակների երկերում համեմատաբար յստակ են տարբեր ժամանակաձեւերի կիրառութիւնների սահմանները:

Մեսրոպ Վայոցձորցին երբեմն ապառնի իմաստն արտայայտում է անցեալ դերբայի միջոցով, ինչպէս՝ «Իսկ ես Արշակ եմ, եթէ երթայցեմ յիմ աշխարհն, ես ոչ միայն փախուցեալ զքեզ՝ այլ բարձեալ զգլուխ քո՝ եւ զիշատակ քո ի տանէն Պարսից» (85): «....եւ ուրացողք ի հաւատոցն կոծեսցին անմխիթար սգով.... գետք հրեղէն յորդեալ՝ մաքրելով զերկիր յանմաքուր գործոց մարդկան» (123):

Ինչպէս դասական շրջանում, այնպէս էլ ժ. դ. ապառնի ժամանակի իմաստն արտայայտուել է առաջին եւ երկրորդ ապառնիների, ապառնի դերբայով արտայայտուած բաղադրեալ ապառնու, ներկայի, երբեմն նաեւ միւս ժամանակաձեւերի միջոցով: Սակայն ապառնի ժամանակի հիմնական արտայայտիչներն առաջին եւ երկրորդ ապառնիներն են: Նոյնիսկ Ե. դարում առաջին ապառնին գործածականութեան յաճախականութեամբ զիջում էր երկրորդ ապառնուն, իսկ ժ. դ. այդ տարբերութիւնն աւելի ակներեւ է: Այսպէս՝ Ղուկասի Աւետարանում առաջին ապառնին գործածուել է 229 անգամ, երկրորդ ապառնին՝ 342 անգամ, իսկ ժ. դ. գործածուել են հետեւեալ յաճախականութեամբ. Մեսրոպ Վայցոցձորցու պատմութիւնը ծաւալով ամենափոքրն է, բայց ապառնիների գործածութեան յաճախականութիւնն ամենամեծն է: Նա 564 անգամ գործածել է երկրորդ ապառնի, 95 անգամ՝ առաջին ապառնի: Առաջին եւ երկրորդ ապառնիները հիմնականում գործածուել են ըղձական, ենթադրական եւ հարկադրական ապառնիների իմաստով, այսպէս՝ 95 առաջին ապառնիներից 35-ը գործածուել են ըղձական, 7-ը՝ ենթադրական, 47-ը հարկադրական ապառնիների իմաստով: 564 երկրորդ ապառնիներից 142-ը կիրառուել են ըղձական, 44-ը՝ ենթադրական, 378-ը՝ հարկադրական ապառնիների իմաստով: Բացի ըղձական, ենթադրական եւ հարկադրական ապառնիների իմաստներից՝ առաջին ապառնին յաճախ հանդէս է եկել ներկայի իմաստով: Այսպէս՝ Մեսրոպ Վայցոցձորցին ներկայի իմաստով գործածել է առաջին ապառնիով արտայայտուած 6 բայ.

1. եթէ շաղկապից յետոյ, ինչպէս՝ «Իսկ գիտացեալ՝ եթէ վասն բարեխօսութեան զայցէ պատանեկին Գնելոյ, զի մի՛ սպանցեն զնա» (69),

2. ուր շաղկապից յետոյ, ինչպէս՝ «Եւ ո՛չ օգտի նմա, եւ այլ ոչինչ. որպէս օձի՝ որ զականջն խցիցէ, զի մի լուիցէ նա զձայն թովչի ճարտարի» (70),

3. թէպէտ եւ շաղկապից յետոյ, ինչպէս՝ «Արդ՝ թէպէտ եւ իցէ անօրէնութիւն յաշխարհիս յասմիկ, դու կարօղ ես խրատել յիրաքանչիւր տեղիս» (94):

Ոչ միայն առաջին ապառնին է հանդէս եկել ներկայ ժամանակի իմաստով, այլեւ շատ յաճախ ներկան է գործածուել առաջին ապառնու փոխարէն: Այսպէս՝ Մեսրոպ Վայցոցձորցին 122 անգամ ներկայի բայաձեւով արտայայտել է ապառնու իմաստ:

Ներկան ապառնու իմաստով գործածել է ինչպէս գլխաւոր, այնպէս էլ երկրորդական նախադասութիւններում՝ «Արդ՝ երանելիք են, որք յայնմ ժամանակի մահատակին, եւ առնում զյաղթութեան պսակն ի Քրիստոսէ» (121): «...եւ եթէ աղբիւր ակնավճիտ տեսանիցէ՝ «Խնդրեմք ի քէն թագաւոր թագաւորաց, եւ Տէր Տէրանց, յորժամ գաս՝ եւ երելիս մեծութեամբ քով եւ գունդք հրեշտակաց, եւ զօրութիւնք առաջի քո առնու ընթանան գաս հիացմամբ մեծաւ, եւ ձայնիւ փողոյ զարթուցանես զննչեցեալսն. Բժշկես զվիրաւորեալսն: Գաս բոցով, եւ դատես անշէջ հրով, ծագիս ի վերուստ յարեւելից կողմանէ... յայտնեալ երելիս յերկրի, եւ հատուցանես յիւրաքանչիւր՝ ըստ գործոց իւրոց» (128):

Շատ յաճախ միեւնոյն կիրառութեամբ զուգահեռաբար գործածուել են ներկայի եւ առաջին ապառնու, ներկայի եւ երկրորդ ապառնու բայաձեւերը: Սա նշանակում է, որ ոչ միայն յստակ չէին տարբերում ներկան եւ առաջին ապառնին, այլ նաեւ՝ ներկան եւ երկրորդ ապառնին: Այսպէս՝ «Առցեն քրիստոնեայքն զսահմանսն զայնոսիկ. լցցի երկիր իրաւամբք եւ ամենայն գործովք բարեաց որպէս զծով՝ որ ծածկէ զջուրս բազումս, զօրանան Հոռվմայացիք զբազում ժամանակս» (121):

Ինչպէս տեսնում ենք բերուած օրինակներից, գրաբարեան ներկան յաճախ է հանդէս գալիս իբրեւ ապառնի, իսկ ապառնին՝ իբրեւ ներկայ, որը եւ հիմք է հանդիսանում հետագայում ներկայի եւ ապառնու նոր ձեւերի առաջացման համար:

Ինչպէս դասական շրջանում, այնպէս էլ Ժ. դ. ապառնի ժամանակի իմաստն արտայայտուել է ոչ միայն պարզ, այլ նաեւ բաղադրեալ ժամանակաձեւով՝ կազմուած ապառնի դերբայով եւ օժանդակ բայով: Այս ժամանակաձեւը պատմիչը շատ քիչ է կիրառել՝ 10 անգամ:

Բաղադրեալ ապառնին երկրորդական կիրառութեամբ հանդէս չի եկել՝ «Պատմեցից ձեզ վասն նեղութեան, դառն եւ չար ժամանակին, որ գալոց է» (104):

Ամփոփելով նշենք, որ ապառնիութեան գաղափարի արտայայտման այս բոլոր միջոցները յատուկ են եղել նաեւ դասական գրաբարին: Պարզապէս եթէ Ն. դարում գործածութեան յաճախականութեամբ երկրորդ ապառնին համարեա կրկնակի էր գերազանցում առաջին ապառնուն, արդեն Ժ. դ. առաջին ապառնու գործածութիւնը կրճատուել էր մօտ տասն անգամ:

Լեզուի հետագայ զարգացման ընթացքում նախ գործածությունից դուրս է գալիս առաջին, ապա՝ երկրորդ ապառնին:

Մեսրոպ Վայոցձորին հետևողականորեն պահպանել է որոշիչ-որոշեալի համաձայնությունը: Սակայն Վայոցձորցու պատմութեան մէջ երբեմն հանդիպում են դրանց անհամաձայնութեան որոշ օրինակներ, ինչպէս՝ «Ընծայիւքն մատուցին զՆերսէս յարքունական կառս սպիտակաձիգ շորոց՝ մեծ պատուով» (61): «Զհանգիստ ոչ գտցեն վասն շառ ժամանակին» (110): «Արդ՝ որ յայն դառն եւ ի շառ ժամանակին մնայցէ» (118), «Տանիլով ընդ իւր.... զսպարապետն Հայոց երկու որդւովքն» (84), «Եւ շինեալ զվկայարան ի նոյն տեղոյ յանուն նորա» (66), «Եթէ յետ նեղութեանց այնց, արեգակն եւ լուսին խաւարեսցին» (123):

Անհամաձայնութեան դէպքերի մի զգալի մասը բխում է հոլովական իմաստների եւ ձեւերի ոչ յստակ տարբերակումից: Պատմագրութեան մէջ առկայ փաստերը վկայում են, որ շատ յաճախ հոլովական ձեւերը փոխարինել են մէկը միւսին: Խառնուել են սեռականի եւ տրականի, տրականի եւ հայցականի եւ յատկապէս ուղղականի ու հայցականի գործածութեան սահմանները, մի հանգամանք, որը նոյնպէս վկայում է գրաւոր խօսքի մէջ կենդանի խօսակցական լեզուի տարրերի ներթափանցման մասին: Այսպէս՝ «Առցէ զնա իւր կնութիւն» (71) նախադասութեան մէջ շփոթուել են տրական եւ հայցական հոլովները<sup>26</sup>: Այս իմաստը գրաբարում սովորաբար արտայայտւում էր կամ «ի + հայցական հոլով» կաղապարով, կամ պարզապէս տրական հոլովով: Այստեղ գործածուել է հայցական հոլովն առանց ի նախդրի: Տրականի փոխարէն հայցական հոլովի գործածութեան փաստ առկայ է նաեւ Մեսրոպ Վայոցձորցու հետեւեալ նախադասութեան մէջ. «Որք ոչ ժամանիցեն յայնմ բարի ժամանակն» (115):

Մեսրոպ Վայոցձորցին յետադաս է գործածել վասն նախադրութիւնը, ինչպէս՝ «Եւ է՛ր վասն ապստամբին յԱրշակայ Հայք առ հասարակ մեծամեծք եւ փոքունք» (79):

Ժ. դ. պատմագրութեան լեզուի ուսումնասիրությունը կարելու է նշանակություն ունի հին հայերէնի վերջին՝ նախամիջին ենթաշրջանի լեզուական առանձնաչափությունները՝ քերականական կառուցուածքի, հնչիւնական համակարգի եւ բառապաշարի կրած փոփոխությունները,

<sup>26</sup> Հոլովական ձեւերի՝ մէկը միւսի փոխարէն գործածուելու մասին տե՛ս Ա. ԱՅՏԸՆԵԱՆ, Քննական քերականություն արդի հայերէն լեզուի, էջ 128:

*բացայայտելու տեսակէտից: Լեզուական փաստերը վկայում են, որ էական փոփոխութիւններ են կատարուել լեզուական բոլոր մակարդակներում: Թէեւ հիմնականում պահպանուել են դասական շրջանի օրինաչափութիւնները, այնուամենայնիւ մատենագրութիւնը բազմաթիւ փոփոխութիւններ է արձանագրել:*

## ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Նախամիջին ենթաշրջան, հեղինակային նորակազմութիւններ, դասական գրարար, պատմագրութիւն, բառակազմական կադապարներ, քերականական ձևեր, առաջին ապառնի, երկրորդ ապառնի, ներկայ ժամանակ, լեզուական առանձնայատկութիւններ:

## РЕЗЮМЕ

Исследование языковых особенностей историографии X в. имеет важное значение для выявления изменений древнеармянского языка: грамматических и фонетических структур, а также словарного состава. Факты свидетельствуют, что значительные изменения произошли на всех языковых уровнях. Несмотря на то, что принципы классического древнеармянского языка в целом продолжали сохраняться, однако, в историографических памятниках письменности зафиксированы многочисленные отклонения от традиционных норм.

В историографии X в. особое место занимает книга Месропа Вайоцзорци «История святого армянского патриарха Нерсеса Партева».

Независимо от историографической ценности этой книги, она имеет большое значение с точки зрения отражения в ней языковых особенностей, закономерностей исторического развития грамматического строя, фонетической системы и лексического состава.

Язык истории Месропа Вайоцзорци прост и сдержан, в нем нет витиеватых и изысканных описаний, но в то же время в этом произведении мы находим 33 новых слова, которые зафиксированы только в данном сочинении. Это авторские неологизмы и слова, характерные для разговорного языка, диалектные формы, вошедшие в литературу благодаря Месропу Вайоцзорци.

Мы исследовали словообразовательные модели неологизмов и пришли к выводу, что они в основном соответствуют закономерностям армянского словообразования.

Что касается морфологических особенностей, то, надо отметить, что язык «Истории» Месропа Вайоцдзорци во многом соотносится с классическими образцами древнеармянского языка: это касается прежде всего системы склонения и системы спряжения.

В «Истории» Месропа Вайоцдзорци границы грамматической категории времени представлены не вполне четко. В отличие от других авторов, Месроп Вайоцдзорци вообще не различает прошедшее совершенное и несовершенное время. У него древнеармянское настоящее время часто выступает в значении будущего, а будущее время — в значении настоящего, что является основой для возникновения новых форм настоящего и будущего времен.

## SUMMARY

The study of the 10<sup>th</sup> century historiography is important for revealing the changes in the linguistic features of the Old Armenian language, such as grammatical and sound structures and vocabulary. The linguistic facts show that there were significant changes in all linguistic levels. In spite of the fact that the regularities of Classical Old Armenian have been preserved, historiography has documented numerous changes.

The book “History of the Armenian Patriarch Nerses the Parthian” by Mesrop Vayotsdzortsi has a special place in the historiography of the 10<sup>th</sup> century.

Regardless of the historiographical value of this book, it is of great importance in terms of its reflection of the linguistic features, the regularities of the historical development of the grammatical and phonetic system, and the vocabulary.

The language of the “History” of Mesrop Vayotsdzortsi is simple and restrained, with no florid and luxurious descriptions, but in the “History”, we find 33 new words, which are recorded only in this work. These are the author’s neologisms and words characteristic of colloquial language, dialectal forms that entered the literature thanks to Mesrop Vayotsdzortsi.

Examining the word-formation model of the new words, we notice that they mostly correspond to the regularities of the Armenian word-formation.

As for morphological peculiarities, the language of Vayotsdzortsi's "History" has remained closer to the classical Old Armenian patterns. Both the system of declension and the system of conjugation are more homogeneous.

The boundaries of different tenses are not clear in the "History" of Mesrop Vayotsdzortsi. Unlike other authors, he does not distinguish between the Past Perfect and Imperfect Tenses at all.

In Mesrop's "History", the Old Armenian Present tense often appears as Future and the Future as Present, which is the basis for the emergence of new forms of Present and Future tenses.

